



Փոքր ֆերմերների և որոշումներ կայացնողների կարիքների գնահատում

Մայիս 2024թ.

Երևան

Իրականացվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» (ՀԿՀԱԱՇՄ) ՀԿ-ի կողմից UDF-22-958-ARM ««Հայաստանում ժողովրդավարական մասնակցության և կլիմայական առումով «խելացի» գյուղատնտեսության խթանում»» ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է ՄԱԿ-ի ժողովրդավարության հիմնադրամի (ՄԱԺՀ/UNDEF) կողմից:

Ճապիկի նկարը՝ ՀԿՀԱԱՇՄ ՀԿ-ի: Կոտայքի մարզի Նոր Գյուղ բնակավայրի ֆերմերուհին պատասխանում է գնահատման հարցերին



Ներածություն

Փոքր ֆերմերների և որոշումներ կայացնողների կարիքների վերաբերյալ սույն գնահատումն իրականացրել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ն՝ ««Հայաստանում ժողովրդավարական մասնակցության և կլիմայական առումով «խելացի» գյուղատնտեսության խթանում»» ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է ՄԱԿ-ի ժողովրդավարության հիմնադրամի կողմից (ՄԱԺՀ/UNDEF):

Ծրագիրը նպատակ ունի խթանել Հայաստանի Կոտայքի և Լոռու մարզերի գյուղատնտեսությունում ժողովրդավարական մասնակցությունը՝ տեղական փոքր ֆերմերներին, հատկապես կանանց, նորարարական գիտելիքներով և հնտություններով հզորացնելու միջոցով կլիմայի փոփոխության պատճառով սոցիալական և տնտեսական խոցելիությունը նվազեցնելու համար (որպես ներդրում ԿԶՆ 2.3 և 2.4 թիրախներում):

Գնահատումը կօգնի հասկանալ հետևյալը՝

- մարզերի հիմնական սոցիալ-տնտեսական մարտահրավերները, ինչպիսիք են երիտասարդների գործազրկությունը, արտագաղթը և այլն,
- «խելացի» և նորարարական հաղորդակցման տեխնոլոգիաները (ՆՀՏ), որոնք արդեն ներդրվում են թիրախային մարզերում և կարող են տարածվել փոքր ֆերմերների շրջանում,
- գյուղական համայնքների գյուղատնտեսական կարիքները հոգալու համար այլ ՆՀՏ-ների կիրառման հեռանկարները՝ աղքատության հաղթահարմանը նպաստելու, գյուղատնտեսական գործունեության արդյունավետությունն ու արտադրողականությունը բարելավելու նպատակով:

Դասընթացների և դյուրացման միջոցով այն կին ֆերմերներին հնարավորություն կտա օգտվել առկա հնարավորություններից՝ ազդելու որոշումների կայացման վրա, վերապատրաստում ստանալ կլիմայի առումով «խելացի» գյուղատնտեսության ոլորտում և բարձրացնել իրենց ֆերմերների արտադրողականությունը, կայունությունը և եկամուտները:

Կարիքների գնահատումը նախապես մշակված հարցաշարով իրականացվել է 2024թ.-ի փետրվար-մայիս ամիսներին: Մշակվել է գնահատման մեթոդաբանությունը և իրականացվել է 180 ֆերմերի կարիքների գնահատում Հայաստանի Լոռու և Կոտայքի մարզերի 24 թիրախային բնակավայրում (90 ֆերմեր յուրաքանչյուր մարզի 12 բնակավայրում), ինչպես նաև համայնքի և մարզերի մակարդակով որոշումներ կայացնողների շրջանում: Բնակավայրերն ընտրվել են Լոռու և Կոտայքի մարզպետարանների հետ խորհրդակցելով՝ կենտրոնանալով այն համայնքների վրա, որոնք առավելապես տուժում են կլիմայական փոփոխություններից:



Կիրառման ոլորտը և նպատակը

Գնահատման նպատակն էր հավաքագրել ելակետային տվյալներ Կոտայքի և Լոռու մարզերի փոքր ֆերմերների (առնվազն 50% կանայք) նորարարական կլիմայական առումով «խելացի» գյուղատնտեսության վերաբերյալ որոշումների կայացման հարցում իրենց դերի վերաբերյալ: Գնահատման նպատակն էր նաև բացահայտել փոքր ֆերմերների կարիքները կլիմայական առումով «խելացի» գյուղատնտեսության մոտեցումների ներդրման համար:

Հավաքագրված տեղեկատվությունը կօգտագործվի ծրագրի այնպիսի բաղադրիչների մշակման և իրականացման համար, ինչպիսիք են ֆերմերային դաշտային դպրոցների կազմակերպումը, հաղորդակցման քարոզարշավը, կանանց նախաձեռնող խմբերի հզորացումը և այլն:

Հիմնական բացահայտումներ Լոռու և Կոտայքի մարզերում

- Գնահատմանը կին ֆերմերների մասնակցությունը Լոռու մարզում կազմում է 73%, իսկ Կոտայքի մարզում՝ 71%, իսկ կառավարման մեջ կանանց մասնակցությունը Լոռիում կազմում է 42,5%, իսկ Կոտայքում՝ 52,5%: Հարցվածների տարիքը եղել է 18-ից 55 տարեկան:
- Երկու մարզի փոքր ֆերմերները բախվում են կլիմայի փոփոխության հետևանքով բազմաթիվ եղանակային աղետների, այդ թվում՝ ջրհեղեղների, սառնամանիքի, անձրևների, կարկուտների, երաշտի: Ըստ թիրախային հարցվողների պատասխանների, կլիմայի փոփոխության հետևանքով եղանակային աղետները զգալիորեն ազդում են գյուղատնտեսության արտադրողականության վրա, ներառյալ բերքի ամբողջական կորուստը և անասունների անկումը: Կլիմայական գործոնների պատճառով բերքի կորուստ արձանագրվել է Լոռու գյուղաբնակների 76,6%-ի և Կոտայքի 36,6%-ի կողմից: Բերքատվության անկում է արձանագրել Լոռու գյուղաբնակների 43,6%-ը, իսկ Կոտայքում՝ 45,2%-ը:
- Երկու մարզի ղեկավարությունից և ֆերմերներից հավաքագրված որակական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ կլիմայի զգալի փոփոխություններն ազդել են գյուղատնտեսության ոլորտի վրա՝ նվազեցնելով մշակաբույսերի և գյուղատնտեսական արտադրանքի արտադրողականությունը. Հողերի մշակումն ավելի դժվարացել է ֆերմերների համար՝ տեղումների նվազման, չոր եղանակի և ջրային պաշարների բացակայության պատճառով:
- Հարցվող ֆերմերները նշել են կլիմայի փոփոխության ազդեցությունը մշակվող գյուղատնտեսական արտադրանքների բնույթի վրա. կլիմայական պայմաններն ավելի բարենպաստ են դարձել այնտեղ ոչ տարածված մշակաբույսերի համար, օրինակ՝ ավելի տաք եղանակային պայմաններին ավելի հարմարեցված մշակաբույսերը, օրինակ՝ խաղողը, դեղձը, ծիրանը, մոշը բարեհաջող աճում են Կոտայքում, իսկ լոբին և ընկույզը՝ Լոռիում:



- Երկու մարզի վարչակազմերը ներկայացնող բոլոր հարցվողների կողմից դիտարկված հիմնական խնդիրը ներառում է ոռոգման համակարգերի և ջրի հասանելիության խնդիրները, մասնավորապես ոռոգման համակարգերի մաշվածությունը և դրա հետևանքով ջրի զգալի կորուստը: Հարցված ֆերմերներից 68,1%-ը Լոռիում և 72%-ը Կոտայքում նշել է ամառային սեզոնին ոռոգման ջրի սակավությունը:
- Երկու մարզի ֆերմերները նշել են նորարարական/կլիմայական առումով «խելացի» մոտեցումների ցածր կիրառումը գյուղատնտեսությունում: Լոռու ֆերմերների 16%-ը և Կոտայքի գյուղացիների 18,3%-ն օգտագործում են նման մոտեցումների ձևեր (օրինակ՝ ցանքածածկ, կաթիլային ոռոգում և այլն):
- Նիտրատային պարարտանյութերի (սելիտրայի) լայնածավալ օգտագործումը որպես անապատացման և էրոզիայի նպաստող նկատվել է Լոռու գյուղացիների 60,6%-ի և Կոտայքի 57%-ի կողմից:
- Թունաքիմիկատների օգտագործումը նույնպես լայնածավալ է՝ Լոռու հողագործների 76,6%-ը և Կոտայքի հողագործների 72%-ը:
- Ֆերմերների աղքատության մակարդակը (100000 դրամից պակաս = 250 ԱՄՆ դոլար) նշել է Լոռիում հարցվածների 81%-ը և Կոտայքում՝ 58,1%-ը: Հայաստանում 2021 թ.-ի առաջին եռամսյակի նվազագույն զամբյուղը կազմել է 66949¹ դրամ: Սա նշանակում է, որ



ֆերմերները ներդրումների համար շատ սահմանափակ ռեսուրսներ ունեն:



Լուսանկարները՝ ՀԿՀԱՄԾՄ-ի հանդիպումներ Լոռու մարզի Ջրաշենի վարչական ղեկավարի (ձախից) և Լեռնանցքի վարչական ղեկավարության ներկայացուցիչների հետ (աջ)

¹ World Food Programme, Market Price Monitoring Bulletin Issue No. 15 May 2023 <https://reliefweb.int/report/armenia/armenia-wfp-vam-market-price-monitoring-bulletin-issue-no-15-may-2023>



Եզրակացություն Լոռու մարզի վերաբերյալ

Բնակավայրերի վարչական ղեկավարների և ֆերմերների շրջանում անցկացված հարցման արդյունքում վեր են հանվել մի շարք սոցիալ-տնտեսական, առողջապահական, ֆինանսական և բնապահպանական հիմնախնդիրներ, որոնք միմյանց հետ փոխկապակցված են:

Սոցիալ-տնտեսական խնդիրներ

Աշխատանքի հնարավորությունների և եկամտի կորուստ. Երաշտի, կարկտահարության և այլ բնական աղետների հետևանքով գյուղատնտեսական բերքի 80 % կորուստը նվազեցնում է աշխատատեղերի և եկամուտների հնարավորությունները, ինչը ստիպում է մարդկանց թողնել իրենց բնակավայրերը և աշխատանք փնտրել քաղաքներում: Կարկտահարությունը և վաղ ցրտահարությունը վնասել է Սարամեջ, Ջրաշեն, Արևաշող, Շենավան, Լեռնավան, Լեռնանցք, Բլագոդարնոյե, Կաթնառատ, Շնող և Սարալանջ բնակավայրերի բերքը:

Տրանսպորտային դժվարություններ. Միջգյուղական հասարակական տրանսպորտի բացակայությունը խոչընդոտում է 80% գյուղացիների ապրանքների տեղափոխմանն ու վաճառքին, ինչը կտրուկ իջեցնում է նրանց եկամուտը և ավելացնում կենցաղային դժվարությունները (Սարամեջ, Արևաշող, Լեռնավան, Լեռնանցք, Բլագոդարնոյե, Կաթնառատ, Շամլուխ, Մեծ Պարնի, Սարալանջ):

Բնակչության աղքատություն. Ֆինանսական կորուստները, բերքի նվազումը և այլ գործոններ նպաստում են աղքատության բարձր մակարդակին:

Առողջապահական խնդիրներ

Սանիտարահիգիենիկ պայմանների վատթարացում. Խմելու ջրի անբավարար քանակը Սարամեջում, Ջրաշենում, Արևաշողում, Լեռնանցքում, Շամլուխում և Շնողում կարող են առաջացնել աղիքային հիվանդություններ, վատթարացնել սանիտարահիգիենիկ պայմանները:

Ջեռուցման համար փայտի օգտագործում. Գազաֆիկացման մասնակի բացակայության պատճառով Շամլուխի, Լեռնավանի, Ջրաշենի, Կաթնառատի և Լեռնանցքի բնակիչները ստիպված են անտառից փայտ հայթայթել:

Ֆինանսական խնդիրներ

Բերքի կորուստ և փոխհատուցում. Բնական աղետներն, այդ թվում սելավը, երաշտը և փոթորիկը, մեծ վնասներ են հասցրել գյուղատնտեսական մշակաբույսերին, իսկ փոխհատուցումները հաճախ չեն բավարարում ֆերմերներին՝ կորուստները լրացնելու համար:

Բարձր ծախսեր. Անասնակերի և հացահատիկային մշակաբույսերի գները բարձր են, ինչը Սարամեջ, Արևաշող, Լեռնավան, Լեռնանցք, Բլագոդարնոյե, Կաթնառատ, Շամլուխ և



Սարալանջ բնակավայրերի ֆերմերների համար դժվարություններ է առաջացնում անասնապահության և գյուղատնտեսության զարգացման գործում:

Բնապահպանական խնդիրներ

Անտառահատում և բնապահպանական հետևանքներ. Վառելափայտ ունենալու նպատակով անտառահատումը և անտառի բացակայությունը Արևաշողի, Շնողի, Մեծ Պարնիի և Սարալանջի շրջակայքում հանգեցնում են Էկոհամակարգերի վնասման, կենսաբազմազանության կորստի և կլիմայական փոփոխությունների:

Հողի դեգրադացիա. Հողի անբավարար պարարտացումը և ագրոտեխնիկական մեթոդների կիրառման պակասը բերում են հողի քայքայման և բերրիության կորստի, ինչը էլ ավելի է նվազեցնում բերքատվությունը: Նման միտում նկատվում է Սարամեջում, Լեռնավանում, Լեռնանցքում, Կաթնառատում, Շամլուխում, Մեծ Պարնիում և Սարալանջում:

Նկարագրված խնդիրները ցույց են տալիս, որ գյուղական բնակավայրերը կանգնած են լուրջ մարտահրավերների առջև, որոնք պահանջում են համապարփակ և համակցված մոտեցում: Գյուղատնտեսության վերականգնումը, առողջապահական պայմանների բարելավումը, տրանսպորտային և ջրամատակարարման համակարգերի զարգացումը, ինչպես նաև բնապահպանական խնդիրների լուծումը կարևոր են կայուն և առողջ համայնքների ապահովման համար: Ֆինանսական աջակցության ավելացումը, ինչպես նաև նորարարական տեխնոլոգիաների ներդրումը կարող են նպաստել այս մարտահրավերների հաղթահարմանը:

Եզրակացություն Կոտայքի մարզի վերաբերյալ

Թիրախային բնակավայրերի վարչական ղեկավարների և ֆերմերների շրջանում անցկացված հարցումների արդյունքում վեր են հանվել մի շարք սոցիալ-տնտեսական, առողջապահական, ֆինանսական և բնապահպանական հիմնախնդիրներ, որոնք միմյանց հետ փոխկապակցված են:

Թիրախային բնակավայրերի վարչական ղեկավարների և ֆերմերների շրջանում անցկացված հարցումների արդյունքում վեր են հանվել մի շարք սոցիալ-տնտեսական, առողջապահական, ֆինանսական և բնապահպանական հիմնախնդիրներ, որոնք միմյանց հետ փոխկապակցված են:

Առողջապահական խնդիրներ. Մաքուր խմելու ջրի անբավարար քանակը չի ապահովում անձնական հիգիենայի, բնակարանի սանիտարահիգիենիկ պահանջները և պատճառ է դառնում աղիքային հիվանդությունների տարածմանը:

Պարենային անվտանգության ապահովման խնդիրներ. Ոռոգման ջրի բացակայությունը կամ անբավարարությունը, ոռոգման նպատակով օգտագործվող մաքուր ջրի ոչ բավարար քանակը հանգեցնում է բերքատվության նվազման, ինչն էլ առաջ է բերում գյուղմթերքներով

բնակիչների պահանջարկի կրճատմանը, նաև երկրում (բնակավայրում) սննդային անվտանգության ապահովման կրճատմանը:

Ֆինանսական խնդիրներ. Ֆերմերները գարնան սկզբին վարկ են վերցնում սերմացուների ձեռքբերման համար: Ցավոք, կլիմայի կտրուկ փոփոխությունները՝ ցրտահարությունը, կարկուտը, երաշտը և ոռոգման ջրի պակասը չեն ապահովում բարձր բերքատվություն, ինչն էլ հանգեցնում է եկամուտների նվազման:

Եղանակային անոմալիաների պայմաններում ֆերմերների մոտ 32 %-ը նշում են գերածախսի մասին: Ծախսերն ավելանում են՝ կապված ոռոգման ջրի խողովակաշարի և պոմպի ձեռքբերման, էլեկտրաէներգիայի սպառման, վնասատու միջատների դեմ պայքարի միջոցառումների ավելացման, անբերրի հողի պարարտացման հետ, հետևաբար նվազում է ստացված շահույթը:

Եկամուտների կրճատումը պայմանավորված է նաև տեղական գյուղմթերքների և արտերկրից ներկրված Էժանագին ապրանքների միջև շուկայական մրցակցությամբ, որի դեպքում ֆերմերների 70 %-ը գյուղմթերքները ստիպված են վաճառել ինքնարժեքից ցածր գնով:

Բնապահպանական հիմնախնդիրներ. Անտառների բացակայությունը հանգեցնում է հողի Էրոզիայի, ջրային ռեսուրսների անբավարարության և խորացնում կլիմայական փոփոխությունների ազդեցությունը գյուղատնտեսության ոլորտի վրա:

Կլիմայական փոփոխությունների ազդեցությունը մեղմելու համար անհրաժեշտ է կիրառել գյուղատնտեսական նորարական մեթոդներ, որոնցից ինտենսիվ այգիների ներդրումն առկա է Գառնի և Հացավան բնակավայրերում, իսկ 5-րդ սերնդի ջերմատների կիրառումը բանջարանոցային մշակաբույսերի աճեցման համար արդեն առկա են Նոր Գյուղ, Ֆանտան և Ձորաղբյուր բնակավայրերում:

Դրանք բնակիչներին որոշ չափով ապահովում են նոր աշխատատեղերով, եկամտով և կրճատում արտագաղթը:

